ՏԵՂԵԿԱՆՔ

(«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագծի վերաբերյալ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2021 թվականի մայիսի 7-ին

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ից:

2. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է նախընտրական հիմնադրամներ կատարած նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրի ձևանմուշը և հայտարարագիրը կազմելու ու ներկայացնելու կարգի և ժամկետների վերաբերյալ ուղեցույցը:

3. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքով և «Տեղական հանրաքվեի մասին» օրենքով նախատեսված՝ քարոզչության կողմերի կողմից ներկայացվող հայտարարագրերի ձևանմուշը և հայտարարագրերը կազմելու ու ներկայացնելու կարգի և ժամկետների վերաբերյալ ուղեցույցը:

4. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ը, սույն օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներով նախատեսվող՝ 40.3-րդ և 40.4-րդ հոդվածներից բխող համապատասխան փոփոխություններ են կատարվում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման կարգը և ձևաչափը հաստատելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի՝ 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 91-Ն և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 04-Ն համատեղ որոշման մեջ:

(5-րդ հոդվածը փոփ. 24.11.22 ՀՕ-446-Ն)